ՔԱՐԹԼԻԻ ՄԱՏՅԱՆ

Ափիազաց և վրաց արքա Բագրատի որդի՝ ճիսուներկուերորդ թագավոր Գեորգի Բագրատունին*

Իսկ այս Գեորգին տիրեց իր ողջ հայրենիքին և թագավորությանը պատանի հասակում, քանի որ, երբ թագավոր դարձավ, տասներկու տարեկան էր։

Այդ ժամանակ սրանից զատվեց Հերեթ-Կախեթ երկիրը, և ազնվականներն ուխտադրժությամբ կալանավորեցին էրիսթավներին։ Նրանց երկրներին վերստին տիրեցին իրենց իշխանները, որոնք նախապես տիրում էին այնտեղ։

Իսկ նրա թագավորության յոթերորդ տարում[1] Գեորգիի դեմ ելավ հունաց արքա Վասիլը՝ ողջ Հունաստանի և օտարազգիների անհամար զորքերով։ Իսկ Գեորգի արքան նրան ընդառաջ ելավ մեծ զորքով։ Եվ երկուսն էլ բազում օրեր ճամբար դրեցին Բասեն երկրում, բայց մարտի մեջ չմտան։ Հեռացավ Գեորգի թագավորը, եկավ և հրկիզեց Օլթիս (Ուղթիս) քաղաքը։ Այնտեղից անցավ Կոլա (Կող գավառ), իսկ հունաց արքա Վասիլը նրան հետապնդելով հայտնվեց Գեորգիի թիկունքում։ Եվ մարտի բռնվեցին Գեորգիի վերջապահ և Վասիլի առաջապահ զորքերը ու տեղի ունեցավ մեծ ճակատամարտ՝ Շիրիմնի (Շիրիմք) գյուղի մոտ։ Երկուստեք շատերը կոտորվեցին, սպանվեցին էրիսթավները և դիդեբուլները, Լիպարիտի որդի Ռատը և Խուրսը։ Եվ ուշ հասավ լուրը Գեորգի թագավորին, թե հարձակում է տեղի ունեցել վերջապահների վրա։ Այնժամ հրաման արձակեց իր զորքին և շտապ զինվեցին։ Ելավ իր զորքի բազմությամբ հանդերձ Գեորգի թագավորը, որն ըստ ամենայնի քաջ էր և անվախ՝ ասես միս ու արյունից չէր ստեղծված, և նրա հետ էր իր զորքի բազմությունը։ Եվ այնտեղից եկավ Վասիլ արքան իր ողջ զորքով։ Երկուստեք մարտի բռնվեցին, տեղի ունեցավ մեծ ճակատամարտ, բազում հույներ կոտորվեցին և ավար վերցրեցին։ Նրանց միջև ճակատամարտն այնչափ երկարեց, որ Վասիլ արքան պատրաստ էր փախուստի դիմելու։

Իսկ երբ վրացիք այլևս չդիմացան, տեղի տվեցին և նահանջեցին։ Հույները հետապնդեցին և սրի քաշեցին շատերին։ (Հունաց) զորքը հասնելով Արտանի (Արտահան), գերեվարեց բնակիչներին և ավերեց այն։ Եվ երբ Գեորգի արքան եկավ Թռեղք, նրան հետապնդեց (Վասիլ արքան), ավերեց Ջավախք երկիրը և անցավ Թռեղք։ Դարձյալ մոտեցան միմյանց, քանի որ ուժեղացել էր Գեորգի թագավորը՝ բերելով Կախեթի և Հերեթի զորքը, սակայն խանգարեցին կրկին մարտի բռնվել։

Նահանջեց Վասիլ արքան Թռեղքից, շրջանցելով Ջավախքը և Արտանին։ Եվ դարձյալ չարամիտ վրեժխնդրությամբ ավերեց այդ երկրները, գնաց ու ձմեռեց Խալդեաց (Խաղտեաց) երկրում, Տբապիզոն քաղաքի մոտ։ Եվ նրանց միջև պատվիրակներ էին գնում-գալիս՝ դաշինք և բարեկամություն հաստատելու համար։

Այն ժամանակ մեծ խռովություն տեղի ունեցավ Հունաստանում։ Միացան սպարապետ և Փոկա ապստամբյալի որդի Ծովիզը ու Արևելից կողմանց երկիրն[2] իրենց թիկունք դարձրին։ Վասիլ արքան մեծ սարսափի ու շփոթմունքի մեջ ընկավ։ Սակայն ասված ողորմաց նրան. Քսիփեսը սպանեց Ծովզին, և նրա համախոհները զատվեցին։ Իսկ Քսիփեսը հատուցում ստացավ Ծովզի հանդեպ ցուցաբերած նենգության համար. քանզի նրան՝ (Քսիփեսին) գերեցին Դալասանոսների բերդում Փոկայի որդուն սպանելու համար, բռնեցին և տարան Վասիլ արքայի մոտ, որը նրան աքսորեց կղզի-

* Սկիզբը տե՛ս ՀԵՍՀ ԳԱ Լրաբեր հասարակական գիտությունների, 1989, № 9, էջ 60—80։

ներից մեկը։ Եվ նրա նմաններից (ապստամբներից) շատերին գլխատեցին, որոնց մեջ էր նաև Փերսի որդի Ջոջիկը, որը սերում էր Տայքից. մյուսները հույներ էին։

Վերադարձավ Վասիլը, եկավ Բասեն, պահանջում էր երկրները և բերդերը, խոստանալով հաշտություն և խաղաղություն։ Գեորգի թագավորն իմանալով ուղարկեց Զվիադ էրիսթավին իր իսկ զորքով և հրամայեց որոշ ժամանակ դաշն կնքելու պատրվակով նրան տեղում պահել, մինչդեռ ինքը հետևեց նրան հզոր զորքով։ Եվ այսպես էր դատում. «Եթե հաշտություն կկամենա Վասիլ արքան, թող լինի այդպես, իսկ եթե պատերազմ կամենա, դրան էլ պատրաստ լինենք»։ Իսկ ովքեր չէին կամենում խաղաղություն, սկսեցին պատերազմի նախապատրաստվել։ Եվ շարժվեցին Վասիլ արքայի դեմ, որը ճամբար էր դրել Սվինդաքս կոչվող վայրում[3]։

Մարտի բռնվեցին և նրա զորքի մի մասը փախուստի մատնեցին։ Զայրացավ Վասիլ արքան, հրամայեց բերել կենաց խաչը և սուրբ թիկնոցը փռեց գետնին, ասելով. «Եթե ինձ թշնամու ձեռքը հանձնես, այլևս հավիտյանս ձեր երկրպագուն չեմ լինի»։ Եվ երբ նրանց միջև մարտը երկարեց, վրաց զորքերը դարձյալ փախուստի դիմեցին և հեռացան փախչելով, անհամար թվով (մարդիկ) սրի ճարակ դարձան, ոմանք էլ գերի ընկան։ Եվ ավար վերցրին հույժ մեծ և գանձը թագավորական, որ իր հետ (Գեորգին) ուներ։

Եվ Վասիլ արքան սկսեց հետապնդել նրանց։ Սակայն նորից սկսեցին հաշտության բանակցությունները առաջվա պես, քանի որ (Վասիլը) մեծապես երկյուղ էր կրում Հունաստանում (սպասվող) խռովությունից։ Եվ դաշն կնքելով, խաղաղություն հաստատեցին, ու Գեորգի թագավորը պատանդ տվեց երեք տարեկան իր որդուն՝ Բագրատին և ազնվաուրներին, նախապես շնորհած բերդերը դատարկելով հանձնեց, սկզբում հանձնած բերդերին ևս տասնչորսն ավելացնելով, ինչպես նաև Դավիթ կյուրապաղատին Տայքում, Բասենում, Կոլ-Արտանիում (Կող-Արտահանում) և Ջավախքում պատկանող երկրները։ Իսկ այս երկրների որոշ եկեղեցիներ, գյուղեր և բնակավայրեր (Վասիլը) շնորհեց Գեորգի թագավորին։ Եվ գնաց Վասիլ արքան, իր հետ որպես պատանդ տանելով արքայազն Բագրատին՝ մեր Գեորգի թագավորի որդուն։ Երդվելով խոստացավ, թե «Երրորդ տարվան որդուդ քեզ կվերադարձնեմ»։ Եվ երեք տարի մնաց թագավորանիստ Կոստանդնուպոլիս քաղաքում։ Երրորդ տարվան հետ ուղարկեց, ինչպես և խոստացել էր[4]։

Եվ երբ վերադառնում էր հայրենիքը և թագավորությունը, նրան մինչև սահմանն ուղեկցում էր Արևելից կատապանը։ Եվ երբ սահմանն անցան, շտապ նրանց հասավ մանդատորը և կատապանին հանձներ Կոստանդին արքայի[5] հրովարտակը, ուր գրված էր հետևյալը. «Կամոքն աստծո վախճանվեց իմ եղբայր երանելի Վասիլ արքան, և նրա փոխարեն ես եմ դառնում՝ ողջ Հունաստանի արքան։ Արդ, ուր էլ հասած լինի Ափխազաց (իշխող) թագավոր Գեորգիի որդի իմ հպատակ Բագրատը, վերադարձրեք շուտափույթ, որ մեզ ներկայանա»։

Իսկ երբ նա (կատապանը) կարդաց արքայի հրամանը, ցանկացավ (Բագրատին) վերադարձնել նրան՝ հրամանի համաձայն։ Իսկույն հետ դարձավ և սկսեց հետապնդել։ Մոտենալով տեսավ, որ դիմավորողների խիստ մեծ բազմություն է ընդառաջ եկել, դիդեբուլները, էրիսթավները, ազնվաուրները՝ տայեցիները, մեսխերը և քարթլեցիները և որ թիվ չկար նրանց բազմությանը։ Շրջվեց և ասաց մանդատորին, որը մոտեցել էր. «Եթե կարող ես, վերադարձրու, ես այլևս ի վիճակի չեմ այդ անել»։

Օ՜հ, աստծո մեծ հրաշք և ողորմածություն։ Ինչպես իսկույն փրկեցիր արդարին նրանց ձեռքից, ովքեր կամենում էին նենգությամբ վերադարձնել նրան։ Եվ եթե որևէ մեկը կամենա իմանալ այդ, աստծո օգնությամբ տեսեք և իմացեք այն աստծո անթիվ ողորմածությունը ափխազաց թագավոր Բագրատ Մեծի նկատմամբ, որպիսին ոչ մի այլ թագավոր չէր արժանացել, որոնց մասին խոսք կլինի առաջիկայում։

Երբ ներկայացավ իր հորը՝ Գեորգի թագավորին, Քութաթիսում գտնվող իրենց արքունիքում, տեսան ծնողները իրենց որդուն, որն իրենց նման էր չտեսնված ու չլսված առաքինությամբ։ Ամեն ինչով գեղեցիկ էր և նրա գեղեցկության մասին մարդ անկարող է պատմել։ Տեսնելով մեծապես ուրախացան և փառք տվին աստծուն։ Այդ ժամանակ բրոնիկոնի երկու հարյուր քառասունհինգերորդ տարին էր (1025 թ.)։

Այնուհետև պատրիարք Մելքիսեդեկը[6] մեկնեց Կոստանդնուպոլիս՝ Կոստանդին արքայի մոտ։ Ընդունեց նրան Կոստանդին արքան և շնորհեց եկեղեցիների զարդեր, սրբապատկերներ, խաչեր և վարդապետական ու քահանայական (զանազան) զգեստներ և իրեր։ Վերադառնալով իր երկիրը և իր թեմը, գնեց գյուղեր Տայքում՝ Ջեղկարեկը հինգ ագարակով, իսկ Ջաղլիսխեվիում (Շնաձորում) գնեց Օրոթա (Որոթա) գյուղը երեք ագարակով։ Այս երկու գյուղերն իրենց ագարակներով հանդերձ գնեց իր եղբայրների գանձով։ Կղարշքում ձեռք բերեց Սխլոանի (Տանձուտ) գյուղը։ Շավշեթում ձեռք բերեց Սխլոբանի մեծ գյուղը՝ նրա ագարակ Նաղվարեվով հանդերձ։ Իսկ Ջավախքում ձեռք բերեց Տոնթիո գյուղը։ Կոլա (գավառում) ձեռք բերեց և շենացրեց Օրոտան (Որոտան) մեծ գյուղը՝ ագարակով հանդերձ։ Իսկ Փանավար (լճի ափին) շենացրեց Մախարովանի գյուղը։ Իսկ Սակոեթում (Սկվիրեթում) տիրեց և շենացրեց երկու գյուղ՝ Նաքալաքեվը և Բերդաձորը և շնորհեց սուրբ քաղաքամայր Մցխեթային՝ Սվետի Ցխովելուն։

Երկու տարի անց՝ բրոնիկոնի երկու հարյուր քառասունչորերորդ տարվա (1027 թ.) օգոստոսի 16-ին, Թռեղք երկրում Մղինվարնի կամ Իծրոնի կոչվող վայրում, վախճանվեց Գեորգի թագավորը, առլեցուն ամենայն առաքինությամբ, տակավին երիտասարդ հասակում, և նրա նախնիներից ոչ ոք նրան նման չէր քաջությամբ, երիտասարդությամբ, բարությամբ, մարմնով և դեմքով, իմաստությամբ և պետությունը կառավարելու կատարյալ ունակությամբ։ Եվ սգի ու տրտմության մեջ թողեց իր հայրենիքի ու թագավորության բոլոր հպատակներին։ Բոլորը ողբում էին նրա բարությունը, երիտասարդությունը և բարեկազմ կերպարանքը։ Տարան ու թաղեցին Քութաթիսի տաճարում։

Թողեց չորս զավակ՝ Բագրատ և Դեմետրե, և դուստրեր՝ Գուրանդուխտ ու Կատա[7], իսկ նրա հինգերորդ զավակ Մարթան վախճանված էր։ Մեծ թագավոր Գեորգիի մահանալուց հետո անմիջապես գահակալեց ինը տարեկան Բագրատը և տիրեց իր ողջ հայրենիքը ու թագավորությունը՝ Վերին և Ներքին երկրները։

Գեորգի թագավորի որդի՝ վրաց և ափխազաց ճիսուներեբերորդ թագավոր Բագրատ Բագրատունին

Նույն ժամանակ Հունաստան գնացին տայեցի չազնաուրներ Կարիճի որդի Վաչեն ու Բանելի[8] եպիսկոպոս Իովանեն և նրանց հետ տայեցի բազմաթիվ ազնաուրներ։ Իսկ Կոստանդին արքան (Բազրատի) վերադարձից մոտ մեկ տարի անց ուղարկեց պարկիմանոզին (սենեկապետին) մեծ զորքով հանդերձ, եկավ և ճամբար դրեց, ավերեց նույն երկրները, ինչ և Վասիլ արքան էր ավերել։ Եկավ Թռեղք՝ Կլդեկարիի բերդի մերձակայքը։ Այդ ժամանակ (այդ ամրոցին) տիրում էր էրիսթավաց էրիսթավ Լիպարիտի որդի Լիպարիտը։ Ժողովեց (Լիպարիտը) և այլ ազնաուրների, կանգ առան Գանձայում և կռվի բռնվեցին բերդի տակ։ Պարկիմանոզը տեսնելով, որ ոչնչով չի կարող վնասել, հետ դարձավ։ Այդ նույն ժամանակ Հունաստան գնաց Ջանչախ Փալելին, հանձնեց Գարղլոբի բերդը՝ միանալով հույներին, իսկ Հոլոլի որդի Արջեվանը հույներին տվեց Ծերեփթի բերդը։

Մտբեվարի[9] եպիսկոպոս Սաբան տեսնելով, որ Շավշեթը պաշտպանելու այլ միջոց չկա, Տբեթի Տուր բերդը կառուցեց, տիրեց Շավշեթ երկիրը, մեծ հավատարմություն ցուցաբերելով ափխազաց թագավոր Բագրատի հանդեպ։ Աստծո ողորմածությամբ թշնամիները չկարողացան գրավել երկիրը։ Քանզի այդ ժամանակ պարկիմանոզն ու պրոեդրոսն ուղարկեցին խարտու-

լար Իվանե Բանելուն, որն իր հետ բերեց Վալանգին մեծ զորքով ու նրան տվեց Սմրատի որդի Դեմետրե Կղարջեցուն[10] երկրի մարդկանց խաբելու համար և այդ պատճառով սույն երկրի ռամիկներից բազում մարդ հարեց նրանց։ Էզրա Անչելին[11] պատսպարվեց նույն (Արտանուջի) բերդում, և ազնաուրներից հավատարիմները նույնպես պատսպարվեցին այդ բերդում և էլ ավելի ամրացան։

Իսկ Արտանուջի բերդին տիրում էր էրիսթավ Իովանե Աբուսերը, և այդ ժամանակ նշված երկրներում տեղի էին ունենում մարտեր ու գժտություններ, և երկուստեք բաղում ասպատակություններ։ Եվ երբ մեծապես ալեկոծվում էր այս երկիրը, դարձյալ աստված ողորմաց ափխազաց և վրաց թագավոր Բագրատին։ Մահացու հիվանդությամբ բռնվեց Կոստանդին արքան։ Գրեց պարկիմանոզ պրոեդրոսին և հետ կանչեց։ Իսկ նա իսկույն գնաց, սակայն մինչև նրա (Կոստանդնուպոլիս) հասնելը Կոստանդին արքան մահացավ։ Մահանալուց առաջ գահին բազմեցրեց այլ արքայի՝ անվամբ Ռոմանոս[12], որին կնության տվեց իր դուստր Զոյային։

Գնաց կաթողիկոս-պատրիարք Մելքիսեդեկը Կոստանդնուպոլիս՝ հունաց արքա Ռոմանոսի մոտ։ Ընդունեց և շնորհեց եկեղեցիների զարդեր, սրբապատկերներ ու խաչեր, վարդապետների և քահանաների զգեստներ, վերադարձավ իր երկիրը և իր թեմը։

Այնուհետև, երրորդ տարում, Մարիամ թագուհին՝ ափխազաց թագավոր Բագրատի մայրը գնաց Հունաստան՝ հաշտություն և միասնություն հայցելու նպատակով։ Եվ վերստին կյուրապաղատության (տիտղոսը) իր որդու համար խնդրելու, ինչպես նրանց տոհմի սովորությունն էր և իր որդի (Բագրատին) կին բերելու համար։

Այդ ժամանակ՝ Քրիստոսից հետո 1068 թ. դեռևս կար Մթածմինդելի թարգմանիչը, որն ուղեկցում էր Մարիամ թագուհուն։

Սակայն մենք դառնանք մեր սկզբնական խոսքին։

Եվ գնալով Հունաստան, ներկայացավ հունաց արքային, ու վերջինս ուրախությամբ կատարեց (նրա) բոլոր խնդրանքները. միասնության և սիրո ուխտ դրեց և երաշխիքներ տվեց, գրեց հրովարտակ՝ ոսկե կնիքով կնքված, շնորհեց կյուրապաղատության պատիվը և Հելենե թագուհուն կնության տվեց Բագրատին[13]։

Մարիամ թագուհին հասնելով իր որդու հայրենիքը՝ Տայոց աշխարհը, հանձնեց կյուրապաղատության պատիվը. կատարեցին հարսանյաց հանդեսը, Բանայում օծեցին թագը։

Փոքր-ինչ անց Քութաթիսում վախճանվեց Հելենի թագուհին, և Բագրատ թագավորը կնության առավ օսերի թագավորի դստերը, Դորդոլելու քրոջը՝ Բորենային։

Սրանից զատ, Գեորգի թագավորից մնացել էր ևս մի որդի, որը գտնվում էր Անակոփիայում, նրա երկրորդ կնոջ՝ օսերի թագավորի դստեր մոտ։ Եվ ազնաուրների հրահրմամբ նրանց միջև տարաձայնություններ էին լինում։ (Այդ որդին) մանկահասակ էր, Դեմետրե անվամբ։ Չկարողացան գահ բարձրացնել, թեև ոմանք կամենում էին, և ո՞չ Բագրատ թագավորն ու իր մայրը, ո՞չ էլ սույն թագավորության թավադներն ու դիդեբուլները չկարողացան համոզել նրան։ Չհասնելով նպատակին, (Դեմետրեն) հեռացավ սույն թագավորությունից, դիմեց հունաց արքային, նրան հանձնեց Անակոփիան։ Եվ այդ ժամանակվանից ցարդ ափխազաց թագավորները կորցրին Անակոփիան։

Այնուհետև սուրբ հոգևոր տեր կաթողիկոս-պատրիարք Մելքիսեդեկը Քարթլիում ձեռք բերեց Պալավրա վանքը չորս գյուղով և Ջուքիթը (Ծուփեթը) իր եկամտով, Ղինցվիսը իր եկամտով և Շինդեբին (իր եկամտի) կեսով։ Կուրբիթում (ձեռք բերեց) ազնաուրական բարեբեր գյուղը, Ջոչեթում մի թաղամաս, վարելահող ու խաղողի արքունական այգի, Ջեգանում Շիդար գյուղը, իսկ Կախեթում՝ Ախատան (գյուղում) մի թաղամաս և Նոսորնայում ևս մի գյուղ, Հերեթում մեծ ջանքերով՝ վանք (և) Լագոդեխը, նույն Հերեթում Կատեխի եկեղեցին իր եկամտով, Կակում՝ տասներկու վաճառական, և Ջիար մեծ գյուղը։ Ահա այն բոլոր գյուղերը, որ նա ձեռք բերեց։

Եվ այն գյուղերը, որ նախկինում ուներ սուրբ Սվետի Ցխովելին՝ կաթողիկե եկեղեցին, ինչպես նաև այլ եկամուտները, նա ներկայացրեց Բագրատ կյուրապաղատին և ստացան (հարկային) անձեռնմխելիություն։ Եվ մայրաքաղաքում այս սուրբ վանքի ունեցած այլ եկամուտները՝ ոչխարներ, ձիեր, օրհնած գինի և այլն, (որ հետո) Ալի ամիրան (Տփղիսի) վերացրեց և բռնագրավեց այս սուրբ կաթողիկե եկեղեցուց։ Եվ այն բոլոր գյուղերը, որ պատկանում էին սուրբ կաթողիկե եկեղեցուն, (Բագրատը) շենացրեց ու ամենուրեք տներ և եկեղեցիներ կառուցեց։

Եվ այնուհետև խորանից հարավ՝ սուրբ նահատակների մատուռում, շինեց իր շիրիմը և կանգնեցրեց զոհասեղան։ Իր շիրմի վրա պահապան նշանակեց իր սան Իոանեին։ Այս զոհասեղանը և պատարագատեղին սահմանեց, շնորհեց Թեձիում երեք շինական իրենց լրիվ երդահողով, խաղողի մեկ այգի, մեկ վարելահող, մեկ ջրաղաց, արոտավայր, և Օտաթլոանում՝ մեկ շինական, Ցիխեգիդիում՝ մեկ շինական, երկուսն էլ լրիվ երդահողով և խաղողի մեկ այգի։ Մցխեթայում (հանձնեց) մեկ սենյակ վանականի խուց, գոմ, արտ, խաղողի այգի, այս ամենը շնորհեց կամովին անձեռնմխելիության (իրավունքով) և կարգեց ժառանգական հոգևոր ագապք (գիշերպատարագ) ու հիշատակում։ Եվ վախճանվեց սուրբն այս, և ահավասիկ աստված հովանավորում է Օքրոպիրին (Ոսկեբերանին)՝ Մելքիսեդեկի դաստիարակած հոգևորդուն։ Կաթողիկոս-պատրիարք դարձավ Օքրոպիրին, և սա նույնպես բազում ինչք ավելացրեց մեծ կաթողիկե առաքելական եկեղեցու (ունեցվածքին)։ Ամենասուրբ և կաթողիկե եկեղեցու արևմտյան անկյունի հարավային կողմում կառուցեց սրբատաշ քարից մատուռ՝ հոյակապ սպիտակ քանդակներով զարդարված, և այլ եկամուտները, ինչ որ կար, ներկայացրեց Բագրատ կյուրապաղատին ու Կյուրիկե թագավորի քրոջ որդուն՝ Կախեթի Դագիկ թագավորին և (նրանք) անձեռնմխելի հռչակեցին, տալով անձեռնմխելիության առհավատչյան։ Օքրոպիրի սուրբ կաթողիկոս-պատրիարքը բազում եկեղեցիներ շինեց և նորոգեց։

Եվ այնուհետև Բագրատը հզորացավ և տիրեց իր Վերին և Ստորին հայրենիքին։

Եվ մեծ Փադլունը վատ ընթացք ուներ, ատում էր սույն թագավորության բոլոր գլխավորներին։ Եվ երբ Բագրատը տակավին մանուկ էր, ժողովեցին սույն թագավորության զորքերը, Լիպարիտի և Աբազայի որդի Իվանեի հետ խոսքը մեկ արին, եկան մեծ Կյուրիկեն՝ ռաների ու կախերի (Առանի և Կախեթի) թագավորը, հայոց արքա Դավիթը[14] և Տփղիսի ամիրա Ջաֆարը[15], քանզի սրանք բոլորը հավաքվել էին Էկլեցի (գետափին)՝ Կյուրիկեի զորահրամանատարությամբ Փադլունի դեմ արշավելու համար։ Փադլունին փախուստի մատնեցին և զորքը կոտորեցին, վերցրին ավար ու անհամար գանձ։ Այդ ժամանակվանից մինչև մեռնելը շարությամբ էր լցված Փադլունը։

Բագրատ թագավորի պատանեկության տարիներին Լիպարիտի որդի Լիպարիտը և Քարթլիի էրիսթավ Աբազայի որդի Իվանեն խաբելով Մուխաթգվերդիում գերեցին Տփղիսի ամիրա Ջաֆարին, բռնեցին և երկար ժամանակ կալանքի տակ պահեցին, խլելով նրանից Բիրթվիսի (ամրոցը)։ Գթաց ափխազաց թագավորը և Տփղիսի ամիրայությունը թողեց (Ջաֆարին). այդ ժամանակվանից թշնամություն մնաց Լիպարիտի և ամիրայի միջև։

Եվ սակավ ժամանակ անց Լիպարիտը խորհուրդ տվեց Բագրատին գրավել Տփղիսը[16]։ Ափխազաց թագավորի զորքերը պաշարեցին Տփղիսը Կուրի այս կողմից, վերից և վարից, իսկ ջրից այն կողմ, Իսանիի կողմից մերձեցան հերեթցիները և կախեթցիները։ Այդ ժամանակ ոմն օս ստրուկի կողմից սպանվեց կախեթեցիների մեծ թագավոր Կյուրիկեն, քանի որ մարտի ընթացքում օսերի թագավոր Ուրդուրեին սպանել էր Կյուրիկե թագավորը։ Եվ արյան վրեժխնդրությունից դրդված որսի ժամանակ օս ստրուկը սպանեց Կյուրիկե թագավորին՝ Փիդրազի լեռներում։

Այդ ժամանակ Կախեթում թագավորում էր Դագիկը[17], որը Սամշվիլդեի և Ջորագետի իշխող Դավիթ հայոց արքայի որդին և Կյուրիկեի քեռորդին էր։

և երկու տարի կռվում էին Տփղիսի համար։ Եվ այդ ժամանակ ամիրան էր Ալիի որդի Ջաֆարը։ Եվ այնպես նեղը գցեցին տփղիսցիներին, որ մի լիտր[18] ավանակի միսը հինգ հարյուր դրամով[19] էին վաճառում և այլևս չկարողացան դիմանալ սովին ու հուժկու գրոհներին։ Տփղիսեցիները մտադրվեցին հանձնել Տփղիսը։ Քաղաքի համար մղվող մարտերի ընթացքում ափխազաց թագավորի զորքերը գրավեցին Օրբեթ և Փարցխիսի ամրոցները։ Իսկ ամիրան մտադրվեց իր զորքով հանդերձ լաստեր և նավեր պատրաստելով գիշերով գնալ Գանձակ՝ Փադլունի որդի Լաշքարիի մոտ[20]։ Եվ ափխազաց թագավորի գիդեբուլներից ոմանք Լիպարիտից ծածուկ թագավորին խորհուրդ տվեցին չվտարել ամիրային ու Լիպարիտից գաղտնի դաշն կնքեցին ամիրայի հետ, կրկին հուշակեցին և հաստատեցին Տփղիսի ամիրա[21]։ Ափխազաց թագավորն իր կողմը գրավեց կախեթցիներին՝ Կյուրիկե թագավորի դեմ, նրա քեռորդի իշխան Աշոտ Մարիլելուն[22] և Խախվիլա Գուրթային Ջվարիս-Ցիխերերդով հանդերձ։ Եվ ափխազաց թագավորը զորքով մտավ քաղաք և թշնամացավ կախեթցիներին։ Եվ այդ ժամանակվանից Լիպարիտը թշնամությամբ լցվեց իր տիրոջ հանդեպ։

Ափխազաց թագավորը արշավեց Կախեթ, ճակատամարտ տվեց Միքելգաբրիելի լեռան վրա և մարտի ժամանակ բռնեց Պանկիսի էրիսթավ Ստեփանոսին՝ Վարջանի որդուն, ապա Խորնաբուջի էրիսթավ Վաչեին՝ Գուրգեն Երեցի որդուն, ապա Շտորի էրիսթավ Ջեդիին՝ Գոդերձիի և Մաճելի (եպիսկոպոսի) քեռորդուն։ Անցավ Թռեղք և հրի մատնեց Բոդոջի հուշակավոր պալատը, որը կառուցել էր մեծ թագավոր Կյուրիկեն։ Եվ այսպես աղերսանքով էրիսթավները հանձնում էին իրենց բերդերը, սակայն (Բագրատը) չկարողացավ անցնել Կախեթ, այլ հետ դարձավ, քանի որ Լիպարիտը սկսել էր դաշինք նյութել։

Սակավ ժամանակ անց Լիպարիտը բերեց Բագրատի եղբորը՝ Դեմետրեին Հունաստանից հունաց թագավորի զորքով։ Եվ այլք ևս՝ գիդերուլներից ու ազնվաբներից ոմանք միացան (նրանց), շրջանցելով Վերին աշխարհը (Վրաց) անցան Քարթլի, մոտեցան Ատենին, տեղ-տեղ հրո ճարակ դարձնելով Քարթլին։

Եվ Լիպարիտին հարեցին կախեթցիներն ու հույները, սակայն չկարողացան գրավել Ատենը, որովհետև բերդատերերը հույժ հավատարիմ էին Բագրատին, բացի Փարսման Թմոգվելուց ու Թուխարիսի էրիսթավ Բեշքեն Ջազելուց։ Անցնելով Ջավախք, սկսեցին Ախալքալաքի պարիսպների կառուցումը, քանի որ այդ ժամանակ այն պարիսպ չուներ։ Ջմեռնամուտ էր։ Հույները կամեցան հայրենիք գնալ, Լիպարիտը հաշտվեց ափխազաց թագավորի հետ, որը նրան շնորհեց Քարթլիի էրիսթավությունը։ Հույները վերադարձան Հունաստան, իրենց հետ տանելով Դեմետրեին։

Եվ վերստին հզորացավ ու երջանկացավ Բագրատ թագավորը իր հայրենիքում։ Եվ բախտը Բագրատին ժպտաց, Վեստը (Սարգիսը)[23] միացավ նրան Անիի ինը բերդերով հանդերձ, բացի Ամբերդից։ Եվ անեցիները տվեցին Անին Բագրատի մորը, քանի որ նրա հոր կողմից հայերը թագուհուն ազգակից էին։ Թագուհի Մարիամը՝ Բագրատի մայրը, հայոց արքա Սենեքերիմի դուստրն էր[24]։

Գարուն էր։ Բագրատը ափխազաց երկրում էր գտնվում, պաշարեց Անակոփիան և գրեթե գրավելու վրա էր։ Եվ եկան Տփղիսի երեցները, քանի որ այդ ժամանակվանից առաջ մեռել էր Տփղիսի ամիրա Ջաֆարը։ Խոստացան (հանձնել) քաղաքը, կոչելով անհապաղ գալ։ Բագրատը հետ դարձավ, Անակոփիայի պաշարումը (հանձնելով) Քվաբուլելի Ճաճայի որդի Օթաղոյին՝ ափխազաց զորքով հանդերձ։ Շարժվեց և եկավ Քութաթիս, հավաքեց Քութաթիսի Սամոքալաքո մարզի զորքը, Գուրիայի և Լոմսիանիի ազնվաբներին բերեց Խուփաթ. կանգնեցրին քարանետ գործիքները և սկսեցին գրոհել։ Ապա թագավորը շարժվեց և եկավ Քարթլի, եկան նաև Տփղիսի այլ երեցները՝ նրան հրավիրողները։

Գնաց Տփղիս, և դիմավորեցին (նրան) Դիղոմի դաշտում քաղաքի երեցները, արքունի ծառաները և ձիավորները, իսկ Ումեդեուլի (թաղամասում)

դաս-դաս շարված հետիոտն ողջ ժողովուրդը, և բազում կանայք ու տղամարդիկ կային հրապարակում։ Երկուստեք հնչում էին փողերը և թմբուկները, որոնց (ժխորից), ահավոր ձայներից երկիրն էր ցնցվում, և երկուստեք սքանչելի ուրախություն էր տիրում։ Ներս առան թագավորին և շրջագայեցին քաղաքում, տեղալով նրա վրա դրամ ու դահեկան, մատուցիցին քաղաքի բանալիները. և տարան ամիրայի պալատ։ Բագրատ թագավորը բազմելով (այնտեղ), սկսեց իշխել։ Տեղավորեց իր մարդկանց քաղաքի դարպասների բոլոր աշտարակներում, գրավեց քաղաքի Դարիջելի բերդը, ապա Ծղալղինիի երկու աշտարակները և Թաբորի ամրոցը, տեղավորելով այնտեղ իր զորքերն ու էրիսթավներին։ Իսկ իսանցիները խորտակեցին կամուրջը և չհանձնեցին Իսանին։ Կանգնեցրին քարանետ գործիքներ և սկսեցին գրոհել Իսանիի վրա, արձակելով նետեր։ Իսանիի դաշտ՝ Բագրատ թագավորի առաջ ներկայացան Կախեթի թագավոր Գագիկը և էրիսթավաց-էրիսթավ Գոդերձին, ինչպես և Կախեթի ողջ դիդեբուլները՝ բանակցելու և հաշտություն հայցելու նպատակով։ Այնժամ Իսանիի դաշտ ելավ Բագրատ թագավորը, կախեթցիներին բերեց՝ ընդունելով նրանց հպատակության խոստումը, շնորհեց խաղաղություն և ազատ արձակեց։ Ուրախություն և խաղաղություն էր տիրում, ու օրըստօրե ավելանում էին կառավարելու հոգսերը։

Եվ այդ ընթացքում անցան ամռան օրերը, դարձյալ սկսեց Լիպարիտը չարագործություններ նրանց դեմ։ Եվ խաբեությամբ Անիից՝ թագուհու մոտից տարավ Արտանուջի էրիսթավ Խխիթի, Ցիխիս-ջվարի և Ածղուրիի բերդի տեր Աբուսերին, ինչպես և Իվանե էրիսթավին, Իվանե Դադիանին, Գվարամին՝ Գոդերձիի որդուն՝ Բեճի բերդի տիրոջը, որոնց կալանավորեց Անիի դարպասի մոտ։ Թագավորը, թողնելով Տփղիսը, անցավ Ջավախք։

Այնուհետև Մածղվերեալը դուրս բերեց մնացյալներին Բագրատի գանձերով՝ ի սատարումն թագավորի։ Թագավորը Ղրտիլայում էր։ Իսկ Լիպարիտը ժողովեց կախեթցիներին և պաշարեց Փոկանի (դյուզը)։ Մածղվերեալը գրեց Բագրատ թագավորին և միաբանեց Լիպարիտի հետ։ Հենց որ այդ իմացավ թագավորը, ձմռան սոսկալի բուքին անցավ Շավշեթը և իջավ Քարթլի։

Եվ Լիպարիտը նորից Հունաստանից բերեց Դեմետրեին՝ Բագրատ թագավորի եղբորը։ Հունաց արքայի գանձերը և զորքը զորավիգ էին։ Եվ սույն թագավորության հպատակները պառակտվեցին. ոմանք Դեմետրեին հարեցին, իսկ ոմանք շարունակեցին հավատարիմ մնալ Բագրատին։ Իսկ Լիպարիտի որդի Իվանեն որպես պատանդ մնաց Բագրատի մոտ, (Լիպարիտը) խնդրեց Բագրատին նրան տալ իրեն և դրա փոխարեն Աբուսերին ազատ արձակեց իր բերդով հանդերձ։ Լիպարիտի դաշնակիցներն էին կախեթցիներն իրենց զորքով և հայոց արքա Դավիթն իր զորքով[25]։ Հզորացավ նա (Լիպարիտը) նրանց ուժով Քարթլիի այս կողմում։ Եվ երկուստեք շարունակվում էին բանսարկությունները։

Եվ եկան վարանգները երեք հազար հոգով, որոնց (թագավորը) ընակեցրեց Բաշում, իր հետ տարավ յոթ հարյուր մարդ։ Եկավ Բագրատը Ներքին Քարթլիի զորքով։ Այս վարանգները մեսխերին չսպասելով՝ գնացին և ընդհարվեցին Սասիրեթի անտառի մերձակայքում։ Ներքին (Քարթլիի) զորքը փախավ։ Եվ այս մարտում բռնեցին Աբուսերին ու նրա հետ այլ զիդեբուլների. չկարողացան մարտում դիմակայել վարանգներին։ Տվեց Լիպարիտը (վարանգներին) վարձը և նրանց աղ ու հացով դիմավորեցին ու այդպես անցան Լիխի (լեռները)։

Եվ նախքան այդ մահացել էր Բագրատի եղբայր Դեմետրեն։ Փախուստից հետո Բագրատը երկյուղ էր կրում իր թագավորության և հայրենիքի պառակտումից։ Եվ խնդրեց Լիպարիտին, սակավաթիվ հեծյալներով գնաց Խովլե՝ Լիպարիտի մոտ։ Եվ իմանալով նրա գալստյան մասին, Լիպարիտը չկամեցավ հանդիպել նրան, խույս տվեց այնտեղից, թագավորը ևս հետ դարձավ ու մեկնեց Ափխազաց երկիր։

Եվ փոքր-ինչ ժամանակ անց Կալմախի էրիսթավ Սուլան և Արտանուջի էրիսթավ Գրիգորը դաշնակից դարձան, իրենց միացնելով մեսխ այլ ազնվաուրների, կանչեցին Բագրատ թագավորին։ Եվ շարժվելով զորքով,

(Բագրատն) անցավ Ռկինիսջվարիի[26] ճանապարհը. գումարվեցին Արղիս-ցիխե բերդում։ Իմանալով այդ, Լիպարիտը ժողովեց իր զորքը, կանչեց կախեթցիներին ու հայերին. հույները ևս իր հետ էին։ Անակնկալ մոտեցավ Արղիս-ցիխե բերդին և բախվեցին։ Դարձյալ հաղթեց Լիպարիտը, փախուստի մատնելով թագավորին, իսկ էրիսթավ Սուլային բռնեցին և բազում կոտանքով ու ցից նստեցնելով պահանջեցին Կալմախը, սակայն նա հրաժարվեց տալ։ Նույն մարտում բռնեցին նաև Աբուսերի որդի Գրիգոլին և պահանջեցին Արտանուջը, մահվան սպառնալիքով, որը և տվեց այն։ Հզորացավ Լիպարիտը Վերին երկրում և գրավեց բերդերը, միացնելով գլխավոր մարդկանց, սահմանը շրջանցելով գնաց Լիպարիտը նույն զորքով Դվին ե կռվի բռնվեց Դվինի (տիրոջ) հետ հօգուտ հունաց արքայի, ապա հետ դարձավ իր երկիրը։

Իսկ նրա վերադարձից մեկ տարի անց Բասեն երկրում երևացին սուլթան Բարահիմ-Իլմիանի (Իբրահիմ բեն Իյնալի)[27] թուրքերը։ Ապա ելավ հունաց զորքը և կանչեցին Լիպարիտին։ Լիպարիտը գնաց օգնելու հույներին ողջ զորքով, սրա (Բասեն երկրի) վերին կողմերում։ Բախվեցին Որդորու և Ուկումի (գյուղերից) ներքև, և թուրքերը փախուստի մատնեցին Հունաստանի ու Լիպարիտի ողջ զորքը։ Մեծ ջարդ տեղի ունեցավ, բռնեցին Լիպարիտին և տարան Խորասան՝ սուլթանի մոտ։ Սույն թագավորության դիդեբուլները և Լիպարիտի որդիներ Իվանեն և Նիանիան փնտրում էին անվտանգության (երաշխիք) և (Բագրատին) ճանաչեցին իրենց թագավոր։ Ապա վերստին հզորացավ և իրեն ենթարկեց Լիպարիտի որդիներին, գրավեց Ուփլիսցիխեն և ազատ արձակեց Իվանեին։

Եվ թուրքերը հաստատվել էին Գանձակի երկրում, մոտեցան Գանձակը գրավելու և ոչինչ չէր խանգարում նրանց։ Հունաց արքան իր փոխարեն ուղարկեց լիկտորին (հեծելազորի հրամանատարին) մեծ զորքով. կանչեցին Բագրատին իր ողջ զորքով, իրենց հետ տարան։ Հարձակվելով թուրքերի վրա, հասան Գանձակի դարպասին. թուրքերը խուսափեցին (մարտից) և թողնելով Գանձակի երկիրը՝ վերադարձան խաղաղությամբ։ Այնուհետև դարձյալ կոչեցին տփղիսեցիները և հանձնեցին Բագրատին Տփղիսը, ներս տարան (քաղաք)։ Եվ մեծ ուրախություն ու խաղաղություն էր տիրում։

Սրանից հետո թուրքերն ազատ արձակեցին Լիպարիտին, և նա անցավ Անի։ Բագրատը թողեց Տփղիսը Լիպարիտի պատճառով և անցնելով Քարթլին, մտավ Ջավախք։ Հզորացավ Լիպարիտը, քանզի հունաց արքային ծառայելու համար էր գերվել, գնաց Հունաստան։ Հունաց արքան ընդունեց նրան, զորք տվեց։ Եվ Բագրատը չկարողացավ դիմակայել։

Մինչ այդ Բագրատը արդեն ունեցել էր Գեորգի անվամբ որդի, որին Քութաթիսում շնորհեց Ափխազաց թագավորությունը, իսկ (ինքը) մեկնեց Հունաստան։ Այդ ժամանակ հունաց արքան էր Կոստանդին Մոնոմախը, իսկ (հետո)՝ Միքայելը։ Եվ Լիպարիտի կամքով Բագրատն իսկույն ևթ չկարողացավ հետ դառնալ իր հայրենիքը և այնտեղ մնաց երեք տարի՝ հույժ մեծարանքով և պատվով։

Այդ ժամանակ արդեն մեր սուրբ հայր Գեորգի Մթածմինդելին եկել էր Մթածմինդայից տեսության և խնդրանքով Կոստանդին Մոնոմախի մոտ։ Իսկ նա լսելով, որ Բագրատ թագավորը և նրա մայր թագուհի Մարիամը ժամանել են Կոստանդնուպոլիս, գնաց նրանց հանդիպելու։ Տեսնելով (նրան) թագավորը և թագուհին, ինչպես և բոլոր երևելի մեծամեծերը անչափ ուրախացան, քանի որ լսել էին, որ նա այդ աստվածապահ քաղաքի (բնակիչ) էր։ Եվ ընդունելով նրա սուրբ օրհնությունն ու շնորհը, հոգևոր մեծ գանձերի արժանացան, փառաբանեցին աստծուն։

Այնուհետև Մարիամ թագուհին՝ Բագրատ թագավորի մայրը, դարձավ նրա սանուհին և օրհնություն ընդունեց նրանից՝ (միանձնուհու) սքեմով հանդերձ։ Իսկ Կոստանդնուպոլիս քաղաքում էին գտնվում սամարացիների ցեղից՝ Սիմեոն մոգի տոհմից, ոմանք և վայրի գազանների միջոցով զարմանահրաշ կերպով գուշակություններ էին կատարում։ Բայց ահա Գեորգին խաչակնքեց և խափանեց նրանց զորությունը։ Տեսնելով այս վանականի հրա-

շագործությունը, թագավորն ու մեծամեծերը լցվեցին բերկրանքով և այդ մասին պատմեցին Կոստանդին Մոնոմախին։

Այնուհետև, երբ Բագրատ թագավորը տեսավ նրա նմանորինակ սուրբ և արժանապատիվ առաքինությունը, մարմնականը հաղթահարած՝ նրա վարքը և հրաշքը, մեծապես սիրեց որպես աստծո հրեշտակի, և միջոցներ էր որոնում, որպեսզի նրան տանի իր հայրենիքը։ Եվ նրան շնորհեց Ճզոնդիգի տաճարի քահանայապետությունը, որտեղ Բագրատն իր հանգստարանն էր կառուցել և որտեղ հանգչում էին բաղում սուրբ նահատակներ։ Այս սուրբ վանականը ո՛չ ընդունեց և ո՛չ էլ համաձայնեց, քանի որ ըստ ամենայնի խուսափում էր մարդկային փառքից և երկրային ունայնությունից, գերադասելով հեզությունը։ Եվ այսպես մի քանի տարի մնաց Բագավորանիստ քաղաքում։

Սակայն դառնանք մեր սկզբնական խոսքին։

Երբ Բագրատը տակավին գտնվում էր Հունաստանում, Լիպարիտը խրնդրեց նրա մոր և այդ երկրի դիդեբուլների համաձայնությունը Բագրատի որդի Գեորգիին թագավոր օծելու համար։ Բերեցին (Գեորգիին) Ռուիսի տաճար և օծեցին թագավոր։ Լիպարիտին դարձրին սրա դաստիարակը, իսկ Բագրատի քույր Գուրանդուխտ թագուհուն՝ խնամակալ, որը դեմքով, իմաստությամբ, առատաձեռնությամբ, աստվածապաշտությամբ և ամենայն առաքինությամբ կատարյալ ու անզուգական անձնավորություն էր։ Մակավ ժամանակ անց Գուրանդուխտը հունաց արքայից խնդրեց վերադարձնել Բագրատին և հունաց արքան ճանապարհեց (նրան) մեծ փառքով, նվերներով ու անհամար գանձերով։ Սովափին՝ Խուփաթում, ընդառաջ ելան (Բագրատին) Ափխազաց երկրի բովանդակ զորքերը։ Եվ եղավ ցնծություն ու տվեցին աստծուն (մեծ) փառք, (իսկ նա) ժամանեց ու բարեհաճեց մտնել իր տունը՝ Քութաթիսի պալատը։

Իսկ ողջ Վերին երկրին տիրում էր Լիպարիտը, որի դաշնակիցն էին Խորասանում սուլթան Դողլուբեկը և Հունաստանում՝ հունաց արքան։ (Լիպարիտը) խնամակալում էր Բագրատի որդի մանուկ Գեորգիին, որպես թագավորի։ Իսկ Բագրատը տիրում էր Լիխից ներքև գտնվող երկրներին։

Մի որոշ ժամանակ անց սրա (Բագրատի) թագավորության դիդեբուլները (դժգոհեցին) Լիպարիտի իշխանությունից։ Սուլա Կալմախելին և բոլոր մեսխերը փախան Լիպարիտից և Դլիվում կալանավորեցին Լիպարիտին ու նրա որդի Իվանեին, իսկ Նիանիան փախավ ու գնաց դեպի Կլդեկարի, սակայն իր հոր բերդապահները ներս չթողեցին նրան և նա անցավ Անի՝ հույների մոտ։ Իսկ Սուլան կալանելով Լիպարիտին և Իվանեին տարավ Կալմախ։ Եվ Սուլան իսկույն ավետաբեր սուրհանդակներ ուղարկեց թագավորին։ Իսկ Գուրանդուխտը և Բագրատի որդի Գեորգին Ղրտիլայում էին, լսելով Լիպարիտի կալանավորումը, որին տարան Ախալքալաք և այնտեղ Բագրատին սպասում էին բերկրալի լուրով հանդերձ։ Եկավ Բագրատը և ի հատուցումն սրա ծառայության, թագավորը Սուլային որպես հայրենիք շնորհեց Ցիխիս-ջվարին ու Օձրխեն Բոդո-Կլդեյով հանդերձ, ինչպես նաև այլ բաղում ինչք ու եկեղեցական (իրեր) և այլն, ինչ կամեցավ։

Եկավ Սուլան Ջավախք՝ թագավորի մոտ, բերելով կալանավորված Լիպարիտին և Իվանեին ու հայտնեց, որ Լիպարիտյաններից խլել է Արտանուջ, Ղվելի, Ուփլիսցիխե և Բիրթվիս բերդերը։ Իսկ Կլդեկարին հաստատապես պահում են բերդապահները, քանի որ այնտեղ է գտնվում Անամորը՝ Լիպարիտի մծիգնոբարթուխուցեսը (դպրապետը)։ Տարան Թռեղք, նրանց խընդրանքով բերդականները չհանձնեցին Կլդեկարին, գերանները ցցեցին և դրանց կապեցին Լիպարիտին և Իվանեին՝ մահվան մատնելու։ Մի քանի օր անց Լիպարիտի բերդապահները թագավորի ու նրա թագավորության դիդեբուլների հետ պայմանավորվեցին Լիպարիտին և Իվանեին անվնաս ազատ արձակելու մասին։ Հանձնեցին Կլդեկարին, դուրս բերեց Լիպարիտը իր խոստակը (ունեցվածքը) և վանական ձեռնադրվեց ու իր որդի Իվանեին հանձնեց թագավորին։ Արգվեթ տիրույթը մնաց Իվանեին։ Երդվեց թագավորին

Լիպարիտը, որ այլևս չի գավի և ազատ արձակեցին ու գնաց (հունաց) թագավորություն։

Եվ փոքր-ինչ անց փախուստի դիմելով՝ Հունաստան գնաց Իվանեն և այնտեղ մնաց մի քանի տարի։ Իսկ Նիանիան մահացավ Անիում՝ հունաց ծառայության մեջ. և Իվանեի համար նրա հայրը միջնորդեց Բագրատի առջև։

Եվ ինքը Բագրատը ևս (Իվանեին) կանչեց ու բերեց իր թագավորությունը և հայրենիք պարգևեց Արգվեթում ու Քարթլիում, և (Իվանեն) հավատարմորեն ծառայում էր։ (Իվանեն) սույն թագավորության իշխանաց իշխան էր և սպասալար (թագավորի) շնորհիվ։ Իսկ Լիպարիտը վախճանվեց Հունաստանում՝ թագավորանիստ Կոստանդնուպոլիս քաղաքում, և նրա հավատարիմները և ծառաները մեծ փառքով բերեցին ու թաղեցին Կացխիում՝ նրա նախնիների գերեզմանատանը։

Եվ զորացավ ու առավել հզորացավ Բագրատը, քան սույն երկրի որևէ թագավոր։ Եվ սա գրավեց Հերեթի և Կախեթի բոլոր բերդերը, բացի Կվետարքի և Նախճավան բերդերից։ Ապա տեղի ունեցան մեծ անցքեր և խառնաշփոթություններ մեծ թագավորների միջև։

Սրա (Բագրատի) թագավորության ժամանակ երևաց սուլթան Արփասարանը՝[28] Պարսկաստանի թագավորը, ասպատակելու նպատակով[29]։ Սա անակնկալ եկավ և ավերեց Կանգարքն ու Թռեղքը, և մի օր այս ասպատակողը հասավ Ղվելիի մատույցները, անցավ Շավշքը, Կղարշքը և Տայքը, հասնելով մինչև Փանասկերտ։ Եվ նույն օրն իջան Թոր և Ղվիվիս խեվի և ինքը (սուլթանը) երեք օր մնաց Թռեղքում։

Քանի որ այդ ժամանակ Տայք էր եկել թագավորը, նրա հետ էին նաև մայրը. քույրը և իր որդի Գեորգին. իջևանել էին Խեկրեբուլթա (վայրում)։ Իսկ երբ նրանք ուզում էին գնալ, հարձակվեց սուլթանի զորքը, հասան և կանգ առան լեռնաշղթայի վրա։ Իսկ նրանք (Թուրք-սելջուկները) իջան Քարթլի, անցան Ջավախք, պաշարեցին Ախալքալաքը, քանի որ մեսխ ազնվուրները և Վերին (Քարթլիի) կողմից եկածներն ամուր պատսպարվել էին Ախալքալաքում, մարտնչեցին (ընդամենը) երեք օր, որովհետև ամուր պարսպով լրիվ չէր պատված Ախալքալաքը։ Չկարողանալով դիմակայել հուժկու դռուլթին, քաղաքաբնակները զինվեցին, բացեցին դարպասները և կատաղի մարտընչեցին և շատերը սրից ընկան։ Եվ թուրքերը ներխուժեցին քաղաք ու գերեցին անհամար քրիստոնյաների, վերջերին բազում գանձ ու գերի և Ախալքալաքի գետն արյունով ներկվեց։

Եվ բանագնացներ ուղարկեց սուլթանը Բագրատ թագավորի մոտ, պարտադրեց խնամիանալ, պահանջելով (նրա) քրոջ դստերը կնության։ Եվ դիմեց սուլթան (Ալփ-Արսլանը) դեպի Անի, գրավեց ու ավերեց Անին, կոտորեց և գերեվարեց անհամար մարդ, ապա գնաց իր երկիրը՝ Պարսկաստան։ (Նա) Անին խլեց հույներից և շնորհեց Աբուլսուվարի որդի Մանուչեին։

Իսկ Բագրատի քրոջ դուստրը, որին սուլթանը պահանջում էր (կնության), հայոց Կյուրիկե[30] թագավորի եղբոր դուստրն էր։ Խնդրեց Բագրատը նրան, բայց հայոց թագավորը չտվեց։ (Ապա) Բագրատը բանագնաց ուղարկեց ազդեցիկ էրիսթավ Վարազ-Բակուր Դամրեկելուն։ (Բագրատը) հայոց թագավորի մարդկանց ևս իր կողմը գրավեց և Սամշվիլդե մտնող հայոց Կյուրիկե թագավորին ու նրա եղբայր Սմբատին կալանավորեցին Քվեշի անտառում և հայտնեցին Բագրատին։ Եվ շտապ եկավ Քվախուրելիից. կալանավորվածներին բերեցին Կլդեկարիի մատույցները։ Պահանջեց Սամշվիլդեն, սակայն (հայերը) չտվեցին այն, քանի որ նրանց (Կյուրիկեի և Սմբատի) մի այլ եղբայրը՝ Ատրներսեհը, պատսպարվել էր Սամշվիլդեում։ Իսկ (Կյուրիկեին և Սմբատին) տարան Սամշվիլդե և սարքեցին խաչափայտեր և հայոց Կյուրիկե թագավորին երեք օր կախված թողեցին։ (Հայերը) խաղաղություն խնդրեցին և տվեցին Սամշվիլդեն։ Ապա եկել էին հայոց թագավորի երկու իշխանները՝ Լուկիայի (Լոքի) իշխանը և Կաքավաքարինը։ Կյուրիկեի եղբայր Սմբատն առաջարկում էր ու համաձայն էր հանձնել երեք բերդ՝ Օփրեթը, Կոշկը և Վարաղաքարը։ Իսկ Բագրատ թագավորը խղճաց նրանց.

վերադարձրեց, ազատելով բոլոր բերդերը, Սամշվիլդեից զատ, և չթողեց Սամշվիլդեում այլ բերդատեր մեծամեծերի, իսկ Սամշվիլդեն գրավեց հարքունիս և այդպես էլ հպատակվեցին հայերը[31]։

Այն ժամանակ, երբ Թեոդորա թագուհին տիրում էր հունաց թագավորությանը, Բագրատ թագավորից խնդրեց տալ նրա դուստր Մարթային (Մարիամին)՝ դաստիարակելու համար։ Իսկ Բագրատ թագավորը մեծ բերկրանքով ուղարկեց իր դուստր Մարթային՝ շքախմբի մարդկանցով հանդերձ։

Իսկ այդ օրերին, աստծո կամքով, վախճանվեց Թեոդորա թագուհին և այդ նույն ժամանակ Մարիամ թագուհին՝ Բագրատի մայրն այնտեղ էր գտնվում, այնտեղ էր նաև մեր սուրբ հայր Գեորգի Մթածմինդելին ինչ-որ պատճառով։ Ինչպես ասացինք, հենց որ մահացավ Թեոդորա թագուհին, իսկույն Մարթային, Բագրատի դստերը, բերին թագավորելու և երբ այս սուրբը տեսավ Մարթային, ի լուր բոլորի կանխագուշակեց, ասելով հետևյալը. «Ի գիտություն բոլորիդ, ինչպես այսօր թագուհին հեռացավ, այնպես էլ թագուհին մուտք գործեց»։ Ապա (Մարթան) սակավ-ինչ մնաց (այնտեղ), և դարձյալ տարան Մարթային։ Իսկ երբ ժամանակը եկավ, վերստին Տուկիծը պահանջեց (նրան) և որպես իր հարս՝ տարավ թագավորանիստ քաղաքը։ Տեսնելով, որ իրականացավ (Գեորգիի մարգարեությունը) զարմացան բոլորը և փառք տվին աստծուն։ Այդպես էլ Մարիամ թագուհին ասաց սուրբ Գեորգիին, երբ վերջինս գտնվում էր Արևելքում, հետևյալը. «Հայր իմ, իրականացավ քո մարգարեությունը, այն, ինչ երբեմն կանխագուշակել էիր Մարթայի մասին»։

Իսկ Բագրատ մեծ թագավորն ամուսնացրեց իր դուստր Մարթային՝ կնության տալով հունաց արքային։

Այնուհետև Մարիամ թագուհին՝ Բագրատ թագավորի մայրը, թագավորանիստ քաղաքից մեկնեց Անտիոք քաղաքը, քանի որ կամենում էր գնալ սուրբ քաղաք Երուսաղեմ՝ աղոթելու և երկրպագելու սրբերին ու կենարար վայրերը, ուներ իր հետ արքայական հրամանագիր քաղաքապետին և Անտիոքի պատրիարքին ուղղված, որպեսզի ըստ ամենայնի փառքով և պատվով ճանապարհեն։ Իսկ պատրիարքը և կուսակալը խորհեցին և որոշեցին, հայր Գեորգիի խորհրդով. «Բարվոք չէ, որ Արևելից թագավորաց մայրը գնա սարակինոսների երկիրը, քանզի վասն մեզաց մերոց նրանք են տիրում այդ երկրին»։ Եվ այսպես իր ուսուցիչ Գեորգիի շուրթերով հայտնեցին թագուհուն ու գնալուց հետ պահեցին։ Սակայն նա գնաց տրտմեց, այնուամենայնիվ, աստծո կամքին չհակադրվեց։ Այնժամ աղերսեց սուրբ վանական Գեորգի Մթածմինդելուն, որպեսզի ողորմա իր հոգուն, ինչպես և ցարդ ողորմացել է, և հոգա իր կյանքի համար, քանի որ ինքն արժանի չեղավ գտնվել և երկրպագել սուրբ վայրերում, իսկ այն հարստությունը, որ նա պատրաստել էր ճանապարհորդության համար, թող նա (Գեորգին) տանի Երուսաղեմ, բաժանի այդ սուրբ քաղաքի աղքատներին ու տնանկներին և այն սուրբ վանքերին, որ դրա մոտակայքում են։

Իսկ այնուհետև ամուսնացրեց իր քրոջ դստերը՝ կնության տալով պարսից արքա սուլթանին։ Ապա երեք տարի անց եկավ սուլթանը, ասպատակեց Ռանը (Առանը) և անակնկալ ներխուժեց Հերեթ[32]։ Եվ այդ երկրի դիդեբուլները զինակից ու հավատարիմ էին Բագրատին։ Եվ այդ ժամանակ Կախեթի սակավազոր թագավորության թագավորն էր Աղսարթանը՝[33] Գագիկի որդին։ Եվ բոլորը լքելով իրենց բերդերը, փախան Կովկասյան լեռներ։ Բագրատն արշավել էր Կախեթը նվաճելու և նրա զորքը առաջ էր ուղարկվել Վեժինի էրիսթավ Ծիրքվալելու մոտ։ Հետ դարձան խաղաղությամբ, պատմեցին սուլթանի գալու և բերդերը լքելու մասին։ (Բագրատը) վերադարձավ շտապ, եկավ իր երկիրը՝ Քարթլի։

Իսկ Աղսարթանը միացավ սուլթանին։ Շնորհեց (նրան) մեծ նվերներ, հավատափոխ եղավ, թլպատվեց, խոստացավ խարաջ, և սուլթանը տվեց բոլոր լքված բերդերը նրան. և ափխազաց թագավորի հպատակների լքած բերդերն ու Աղսարթանի բուն (հպատակների) լքած բերդերը բոլորը տվեց։ Եվ երեք շաբաթ անց արշավեց ափխազաց թագավորի դեմ։ Նրան միացան

հայոց թագավոր Կյուրիկեն, Տփղիսի ամիրան և Աղսարթանը, (որոնք) ներխուժեցին Քարթլի Ջաճվիթի կողմից[34]. լուսաբացին (նրանք) ասպատակողներ արձակեցին, և սգով լցվեց ողջ Քարթլին, դեկտեմբերի տասին՝ երեքշաբթի օրը, իսկ տարին էր քրոնիկոնի երկու հարյուր ութսունութ թվականը (1068 թ.)։

Եվ Քարթլիում հույժ շատ հաց ու գինի կար։ (Սուլթանը) մնաց վեց շաբաթ, ապա սկսեց ավերել և մարդկանց կոտորել. նրա հրոսակներն անցան Արգվեթ։ Հասան ե ասպատակեցին մինչև Սվերի բերդը։ Եվ անհամար քրիստոնյաներ կոտորվեցին ու գերեվարվեցին։ Քարթլի երկիրը եղկելի մի տեսարանի էր վերածվել. ավերվեցին բոլոր եկեղեցիները և դիերի բազմությունից գետինը չէր երևում և ի հատուցումն մեր մեղքերի, աստծո զայրույթը վերևից երկինքն էր վկայում, և արյուն տեղացող ամպը արևելքից ծածկեց Քարթլիի (երկնակամարը), ցերեկվա լույսն էլ խավար գիշեր դարձավ։ Տեսարանն այդ զարհուրելի էր ու սարսռեցուցիչ, և տեղ-տեղ արյան անձրև տեսան մարդիկ։ Եվ եղավ սաստիկ ձմեռ, փախած ու լեռներում ապաստանածներն էլ կոտորվեցին ձմռան դաժանությունից։ Իսկ ողջ Քարթլիում զորքը հաստատվեց, իսկ ինքը՝ սուլթանը, գտնվում էր Կարբիում, հետո անցավ Շերթուլթա, ծանր ձմեռն ու դաժան բքերը նեղում էին նրանց։

Լիպարիտի որդի Իվանեին Բագրատ թագավորը դեսպան ուղարկեց՝ խաղաղություն հայցելու համար։ Իսկ նրան (սուլթանը) հետ ուղարկեց Ափխազաց երկիր՝ Բագրատի մոտ և խարաջ պահանջելով՝ խաղաղություն խոստացավ։ Սակայն ձմռան դաժանությանը չդիմանալով՝ հետ վերադարձող սուլթանը գնաց Քարթլի, գրավեց Տփղիսը և Ռուսթավը, (դրանք) շնորհեց Փադլունին՝ Դանձակի տիրոջին։ Եվ ոչ թե մեր թագավորների հանդեպ ունեցած թշնամության համար ոչնչացրեց այս թագավորության (քաղաքները)՝ Տփղիսն ու Ռուսթավը, և ոչ էլ նրա համար, որ այդ ամիրաները երեսպաշտորեն ծառայում էին նրա արքունիքում, այլ բարու և ծառայության դիմաց չարություն էին անում յուրաքանչյուրին, քանզի նրանք ապավինում էին իրենց անհավատության ուժին և ամենից առաջ վայրագ էին։ Քարթլին ավերելու ժամանակ նրա (սուլթանի) զորքերի թիվը հասնում էր հինգ հարյուր հազարի։

Սուլթանը գնաց իր երկիրը։ Եվ երբ գարուն եկավ, խիստ հորդացան գետերը ու Կուրը դուրս ելավ իր ափերից, տարածվեց դաշտերով մեկ, քշեց տարավ բազում մարդկանց, որոնք փրկվել էին սուլթանից։

Այնուհետև Փադլունը դիմեց ամբարտավանության և անիրավության՝ Տփղիսի որոշ արվարձաններից տեղահանում էր արհեստավորներին։ Եվ երբ գարունը եկավ, թագավորն անցավ Քարթլի ու կանգ առավ Դիդգորիում, քանի որ այն թագավորական ամառանոցն էր։ Իսկ Փադլունը հաշվի չառավ թագավորի Դիդգորիում գտնվելը, երեսուներեք հազար զորքով, եկավ Տբփղիս, բանակ դրեց Իսանիի դաշտում։ Այնտեղ թողնելով վրանները, ամեն գիշեր բարձրանում էր դեպի Մուխնար և ասպատակում Քարթլիի սահմանները։

Ապա ափխազաց թագավորը, որը գտնվում էր Տփղիսից այն կողմ, տեղեկանալով Քարթլիի կրած տառապանքի, Փադլունի ասպատակության մասին, հետախուզելու ուղարկեց Լիպարիտի որդի Իվանեին, Քվաբուլիի որդի Նիանիային և Մուրվան Ջաղելուն՝ Ղվելիի էրիսթավին, նրանց հետ նաև այլ սակավաթիվ ազնվուրների՝ ընտիր զորքով հանդերձ։ Սակայն չկարողացան նրանց հանդիպել Քարթլիում, այլ նահանջողներին հասան Մուխնարի մերձակայքում՝ Միլկանի լեռների մոտ։ (Թշնամու) բանակի վերջապահ ուժերի վրա հարձակվեցին և սուրը մերկացնելուն պես փախուստի մատնեցին Փադլունին։ Կանգ առան Նարեկվավի ձորում Փադլունի փախած զորքերը, որոնց կոտորում ու գերում էր ափխազաց թագավորի բանակը, ձորը լցվեց ձիերի և մարդկանց դիերով։

Ապա փախչող զորքի մեծ մասը սկսեց նահանջել Շոբոյի անտառով։ Եվ անտառներից, թփուտներից Բագրատի զինվորները հավաքում էին Փադլունի թաքնված զինվորներին, ինչպես ազնվասարեկի ձագերին։ Եվ կտրե-

ցին Ղարթիի նեղ կիրճը, Փաղլունի զորքից քչերը աղատվեցին։ Ապա Բագրատի զորքը նրանց հետապնդեց մինչև խերկ լեռը։ Կոտորեցին ու գերեցին Փաղլունի զորքը։ Իսկ Փաղլունը մոտ տասնհինգ հեծյալով ճողոպրեց Ծիլկանի ճանապարհով և հեղեղված Արագվի գետի ափին մոտեցավ, ուղևորվեց դեպի էրծո՝ իրեն որպես բանագնաց ներկայացնելով, թե իբր «Փաղլունի բանագնացն եմ և որպես ավետաբեր գնում եմ Աղսարթանի մոտ, քանի որ ափխազաց թագավորի զորքը փախուստի մատնեցինք»։

Հանդիպեց նրան ծանոթ մի մարդ, որը ճանաչում էր Փաղլունին և ասաց. «Դու բանագնաց չես, այլ ամիրայից-ամիրա Փաղլունն ես»։

Փաղլունը այդ մարդուն ասաց. «Ընդունիր ինձանից մեծաքանակ ոսկի ու արծաթ և հարստություն ու մի՛ մատնիր ինձ, տեղափոխիր և ուղեկցիր ինձ մինչև դաշտ ու եկ ինձ հետ»։

Այն մարդը նրան ասաց. «Չեմ կարող այդ գործը անել, քանզի սույն երկրի բնակիչ եմ։ Արդ, լսիր ինձ ու եկ ինձ հետ, և ես քեզ կտանեմ Աղսարթանի մոտ, որը քեզ կուղարկի քո երկիրը»։

Կամովին այդ չէր ցանկանում Փաղլունը, սակայն այլևս անկարող էր գնալ էրծո։ Առաջնորդեց այդ մարդը նրան և ժալեթում հանձնեց ազնաուր Տոլոբելու որդի Իսահակին՝ մեսխ ազնաուրին։ Ապա իմանալով Փաղլունի պալատ գալու մասին, (Իսահակը) կողոպտեց Փաղլունի մարդկանց, իջեցրեց ձիերից և կալանավորեց ու Փաղլունին նստեցրեց ջորու վրա։ Եվ Իսահակը մոռանալով ափխազաց թագավորին հպատաե լինելը, ափխազաց թագավորից փախած Փաղլունին կալանավորեց և տարավ Բոճորմա՝ իբր Բագրատին հանձնելու համար։ Սակայն շտապ տարավ Թելավ և հանձնեց Աղսարթանին։ Իսկ Աղսարթանը փութով նրան տարավ Խորնաբուջ, քանի որ երկյուղ էր կրում ափխազաց թագավորի հետապնդումից։ Կալանավորեցին Խորնաբուջում Փաղլունին և (վերջինս) տվեց նրան Խորնաբուջը։ (Փաղլունին) տարան Արագեթ, Արագեթը ևս տվեց Աղսարթանին։

Իսկ Բագրատը, որ երկյուղ էր կրում Փաղլունին ազատ արձակելուց, Բոճորման և Ուջարման տվեց կախեթցիներին ու (իր հետ) տարավ Փաղլունին։ Կապեցին ցցին (նրան) և ուղևորվեցին Տփղիս։ Եվ դժվարությամբ գրավեցին Տփղիսը, քանի որ այնտեղ ներսում գտնվող մարդն ինքն էր ջանում ամիրա դառնալ։ Սակայն Բագրատն իրեն չպահեց Տփղիսը. այլ Դմանիսում թողած Սիթլ-արարին գտավ, բերեց Տփղիս և նրան հանձնեց Տփղիսը։ Իսկ իրեն վերցրեց Ռուսթավը, Փարցխիսը, Ագարանը (Ագարակը), Գրիգոլ-Ծմիդան (Սուրբ Գրիգորը), Քավազինը և քառասունչորս հազար դահեկան, նաև պատանդներ՝ նրա (Փաղլունի) եղբոր Մանուչեի որդուն և Գանձակի երեք իշխաններին։

Այդ ժամանակ թարգմանիչներ էին Իոանեն՝ երբեմնի պատրիկը, Պետրիծի իմաստասերը և Ստեփանեն։

Ապա սուլթանը ուղարկեց Սարհանգ Ալխազին, նրա միջնորդությամբ ու սուլթանի երաշխիքով հաշտվեց Բագրատը, արձակեց Փաղլունին, Հանապարհեց նրան դեպի իր (իշխանությունը) Գանձակ, նրա հետ էլ գնաց Սարհանգը։

Մատուցեցին Գագի բանալիները, և գրավեց ափխազաց թագավորը Գագը։ Այնուհետև երդմնազանց եղավ Փաղլունը ու խախտեց մեծ սուլթանի միջնորդությունն ու հափշտակեց Քավազինը։ Եվ երբ դրանից հետո թագավորը ափխազաց երկրում էր, եկավ Փաղլունը, պաշարեց Ագարակը և բերդապետն անձնատուր եղավ։ Շտապ եկավ թագավորը, պաշարեց Ագարակը և գրավեց այն։

Եվ դուրս բերեց Դորդոլելուն՝ օսերի թագավորին, քառասուն հազար օս ռազմիկներով, զորահրամանատարությունը շնորհեց իր որդի Գեորգի կյուրապաղատին ու ավերեց Գանձակը, վերցրեց գերի և անհամար ավար, ուղարկեց իր թագավորությունը։ Այնուհետև օսերի մեծ թագավոր Դորդոլելը կամեցավ ներկայանալ քրոջ փեսային՝ սեբաստոս Բագրատին և տեսակցություն խնդրեց Բագրատից։ Իսկ Բագրատը թույլ տվեց, և օսերի թագավորն ուրախությամբ եկավ օսերի բոլոր իշխաններով հանդերձ՝ անցավ Ափխազաց

երկրի ճանապարհով ու հասավ Քութաթիս։ Եվ տեսավ իր քույր թագուհուն՝ Գեորգի կյուրապաղատի մորը, բայց դրանից առաջ Գեորգի կյուրապաղատը դիմավորեց նրան, և բերեցին Քարթլի։ Թագավորը գտնվում էր Նադարբազեվում, Տինիսխիդիի պարտեզում Ընդառաջ եկավ մեծ հանդեսով ու պատվով։

Հանդիպեցին միմյանց Կեզունայում։ Տիրում էր մեծ բերկրանք, և շեփորների, թմբուկների մեծ ու ահեղագոչ ժխոր։ Եվ միասին մնացին տասներկու օր՝ ամենայն հանգստությամբ ու բերկրանքով։

Ձմռան պատճառով շտապեցին, ապա (Բագրատը) օսերի թագավորին ու բոլոր մեծամեծերին շնորհեց նվերներ ու թանկարժեք պարգևներ։ Ճանապարհեց և մեկնեցին ուրախությամբ։

Վախճանվեց կաթողիկոս-պատրիարք Օքրոպիրը և կաթողիկոս օծվեց Գեորգի Տայեցին։ Կարճ ժամանակ անց վախճանվեց Գեորգի Տայեցին, ու կաթողիկոս-պատրիարք դարձավ Գաբրիելը։

Այնուհետև սուլթանը ուղարկեց բանագնացներ և Բագրատ թագավորի համար ժողովում էր նվերներ, մեղմությամբ պահանջում էր խարաջ։ Սակայն Բագրատ թագավորը չսահմանեց խարաջ, այլ նա ևս բանագնացներ էր ուղարկում և հավաքում նվերներ (սուլթանի համար)։ Եվ նրանց միջև արտաքուստ կար սեր և միություն։

Մի քանի տարի անց, երբ Բագրատ թագավորը գտնվում էր Սամշվիլդեի լճերի մոտ, որովայնացավով հիվանդացավ ու կանգ առավ Մարաբդայում։ Եվ սաստկացավ հիվանդությունը. տարան պատգարակով, որի մոտ էին գտնվում Գեորգի կյուրապաղատն ու նրա բոլոր դիդեբուլները, իսկ կյուրապաղատ Գեորգին ընթանում էր առջևից. թագավորին բերին Քարթլի. Նրա բոլոր դիդեբուլները ևս եկան այնտեղ։ Ապա ժամանեցին նրա մայրը՝ Մարիամ թագուհին, և նրա կին Բորենան ու դուստր Մարիամը։ Ապա մի քանի օր անց իր որդի Գեորգի կյուրապաղատին հանձնեց թագավորությունը, այդ թագավորության դիդեբուլներին և բոլորին հպատակեցրեց նրան ու ասաց իր մորը. «Մայր իմ. խղճում եմ քեզ, քանզի քո բոլոր զավակները քեզանից առաջ կվախճանվեն, և այդպես էլ ինքդ կմեռնես»։ Այնուհետև Բագրատը վախճանվեց նոյեմբեր ամսվա քսանչորսին՝ քրոնիկոնի երկու հարյուր իննսունմեկերորդ տարում (1072 թ.)։

Եվ Բագրատի մահվան ժամանակ սպանվեց նաև սուլթանը մի ոմն թուրք ծերունու կողմից՝ իր զորքի ճամբարում։ (Սուլթանը) անցել էր Ջիհոն (գետը) յոթ հարյուր հազար մարդով, արշավել թուրքերի սուլթանի դեմ, Սամարղանդի մոտ գտնվող ինչ-որ բերդ պաշարել և սպանվել այդ բերդի թուրք տիրոջ կողմից, սակայն այդ թուրքը չէր հասցրել բերդ մտնել՝ նրան անողորմաբար թրատեցին։ Բագրատն ու սուլթանը չիմացան միմյանց մահը։

Այնուհետև գահ բարձրացավ Բագրատի որդի Գեորգի կյուրապաղատը[35]*։*

Եվ նրա ողջ թագավորության մեջ անդորր էր տիրում։ Մեծ փառքով ու հարգանքով հուղարկավորեցին և թաղեցին (Բագրատին) Ճոնդիդիում։ Այս Բագրատ թագավորն ինը տարեկան էր, երբ գահ բարձրացավ և վախճանվեց հիսունվեց տարեկան հասակում։ Այս Բագրատը սկզբից կյուրապաղատ էր, այնուհետև դարձավ նովելիսիմոս, ապա՝ սեբաստոս։ Նա գեղեցիկ էր, բոլոր այրերից իմաստությամբ կատարյալ, ճարտասան փիլիսոփա, երջանիկ՝ բախտով, ափխազաց բոլոր թագավորներից ամենահարուստը, մեղավորներին՝ ողորմացող, առատաձեռն՝ (տնանկների) հանդեպ։ Սակայն նրա օրոք երկիրը հանգստություն չուներ. եկեղեցիները և շինականները, ազնուրները և աղքատներն անասելի վատ վիճակում էին։

Քարթլիի և ափխազաց երկրի հիսունչորսերորդ թագավոր Բագրատի որդի Գեորգի Բագրատունին

Գեորգի թագավորն աղքատներին ողորմացող և կարեկցող, ահեղ այր էր և ափխազաց բոլոր թագավորներից ամենաառատաձեռնը, բոլորից հյուրասերը, ընտիր հեծյալ-աղեղնավոր էր։

Իր հորից հետո խաղաղ անցկացրեց մեկ ձմեռ և կես ամառ։ Այնուհետև սրա թագավորության իշխանները՝ Քվաբուլիի որդի Նիանիան, Լիպարիտի որդի Իվանեն և սվանների էրիսթավ Վարդանը իբրև թե Գեորգի թագավորի մանկահասակ լինելուց ինչ-որ ձևով օգտվել կամեցան և խառնակություն գցեցին երկրում։ Իվանեն դաշնակցելով կախեթցիներին, եկավ կանգնեց Քսանի (գետի) ափին, իսկ Նիանիան հափշտակելով Քութաթիսի գանձարանը, ամրացավ Քութաթիսում. Վարդանը ոտքի հանեց սվաններին՝ անհնազանդ հարկատուներին, ասպատակեցին և կոտորեցին Սաեգրո երկիրը (Ծգերաց աշխարհը)։

Սակայն Գեորգի թագավորը հաղթեց առաքինությամբ, իմաստությամբ, և ներողամիտ դարձավ, շնորհեց Իվանեին Սամշվիլդեն, իսկ Իվանեի որդի Լիպարիտին Լոծոբանը (Ծոբենը)՝ Ռուսթավի փոխարեն, որը տվել էր կախեթցիներին, իսկ Նիանիային շնորհեց Թմոգվին և այլ ընտիր իրեր, Վարդանին պարգևեց Ասկալանան, Ջազելիներին՝ Ութաղուբոն. Իվանեի առաջարկով բոլոր հավատարիմներին և անհավատարիմներին շնորհեց ողորմածություն և թագավոր Գեորգին խաղաղեցրեց իր թագավորությունը։

Կրկին ապստամբեց Լիպարիտի որդի Իվանեն, և (այդ մասին) իմացավ Գեորգի թագավորը։ Քութաթիսից եկավ Սամցխե՝ իր հետ բերելով մեսխերին, անցավ և եկավ Սամշվիլդեի դարպասների մոտ։ Այնտեղ բերեց կախեթցիների թագավոր Աղսարթանին։ Իվանեն չկարողացավ պատսպարվել բերդում, հեռացավ դեպի հարավային լեռները։ Այդ խառնաշփոթության ընթացքում Աղսարթանը խլեց Լիպարիտից Լոծոբանը, ներխուժեց Սամշվիլդե, թողեց անցավ Ջավախք, և բերեց արքայից-արքա Գեորգին նրանց իր առջև ու էկրանթայում հավատարմության երդում տվեցին, որից հետո Իվանեի (իրավունքները) հաստատվեցին Կլդեկարիի և Սամշվիլդեի նկատմամբ։

Դարձյալ ապստամբեց Իվանեն, խաբեությամբ գրավեց Գագը Գեորգի թագավորի բերդապահներից, վաճառեց (այն) Գանձակի տեր Փադլունին։ Ապա եկավ սուլթան Մելիքշահը՝[36] համայն քրիստոնյաների թշնամին։ Իվանեն իր որդի Լիպարիտին ընդառաջ ուղարկեց նրան (Մելիքշահին), ենթարկեց սուլթանին, և մնաց նրա մոտ որոշ ժամանակ, ապա (Լիպարիտը) փախավ։ Սուլթանը եկավ և պաշարելով գրավեց Սամշվիլդեն ու գերի դարձավ ինքը՝ Իվանեն, կնոջ հետ, թոռներով և բոլոր ազնվուրների կանանցով հանդերձ, (իսկ) Սամշվիլդեն սուլթանը պահեց իրեն։ Այնտեղ գտնվելու ժամանակ ասպատակեց Քարթլին, անթիվ գերի և ավար տարավ, ապա հետ դարձավ։ Այնուհետև գրավեց Գանձակը, Գանձակի իշխող կարգելով Սարհանգին, նրան թողեց քառասունութ հազար զինվոր, (այդ) ողջ երկիրը նվաճելու նպատակով։ Փադլունը պատսպարվեց ամուր բերդերում, սակայն չկարողացավ դիմակայել. նրան ևս դուրս բերեցին ու կալանավորեցին։

Կարճ ժամանակ անց Սարհանգը ժողովեց իր և Գանձակի ողջ զորքը՝ Դվինի և Դմանիսի ամիրաների զինակցությամբ ու շարժվեց Գեորգի թագավորի դեմ։ Ժողովեց արքայից-արքա Գեորգին իր ողջ զորքը՝ Վերին և Ներքին երկրներից, իր մոտ բերեց (նաև) Կախեթի թագավոր Աղսարթանին ու բախվեցին միմյանց։ Աստված հզորացրեց Գեորգի թագավորին. փառավոր խաչի հովանավորությամբ Փարցխիսի մոտ հարձակվեց նրանց վրա, փախուստի մատնեց Սարհանգի բանակը, ցրիվ տվեց և կոտորեց։ Երեկո էր, և գիշերը փրկեց Սարհանգի զորքի մնացորդներին. արքայից-արքա Գեորգին անկորուստ ու խաղաղ վերադարձավ իր թագավորությունը։

Այնուհետև աստված (Գեորգիին) շնորհեց հույների բռնագրաված բերդերը։ Գրավեց հույներից Անակոփիան՝ Ափխազաց երկրի բերդերից գլխավորը և Կղարջքի, Շավշքի, Ջավախքի և Արտահանի բազում բերդերը։ Ապա աստված (այսպիսի) շնորհ արեց նաև (Գեորգիին). նա գրավեց Կարս քաղաքը՝ բերդ-երկիրը և Վանանդի ու Կարնու փորի (Կարմիր փորակի) ամրոցները և թուրքերին վտարեց այդ երկրներից։

Թարգմանեցին և ծանոթագրեցին Վ. Մ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ
Հ. Գ. ՄԿՐՏՈՒՄՅԱՆ

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1 Այսինքն 1021 թ.։ Գեորգի I-ը գահակալել է 1014—1027 թթ.։

2 Բնագրում հիշատակվող տարածքը ճշտիվ համապատասխանում է հայկական աղբյուրների «Արեբելից կողմանց Երկրին»։ Այսպես էր կոչվում հայկական իշխանությունների համակարգը՝ Հյուսիսային Հայաստանը, որը հետագայում Զաքարյանների և նրանց վասալ հայ իշխանների ժառանգական տիրույթն էր։

3 «Սվինգաքսը» պիտի լինի հայկական աղբյուրների Ճամբար գյուղը։

4 Այսինքն Հայրենիք վերադարձավ 1025 թ.։

5 Բյուզանդական կայսր Կոստանդին VIII (1025—1028 թթ.)։

6 Նկատի ունի Քարթլիի կաթողիկոս Մելքիսեդեկին (XI դ. առաջին երեսնամյակ)։

7 Գեորգի I-ի և Մարիամ թագուհու դուստրեր Գուրանդուխտը և Կատան համապատասխանաբար ամուսնացած են եղել Կարսի թագավոր Դագիկի (1029—1065 թթ.) և Տաշիր-Զորագետի թագավոր Կյուրիկե II-ի (1048—1089 թթ.) հետ։

8 Բանակում (վրաց. Բանա) նստող եպիսկոպոսի տիտղոսն էր։

9 Տրեթի Եպիսկոպոսի տիտղոսը։ Տրեթը Շավշք գավառի կենտրոնն էր։

10 «Կլարջի»—Կղարջք գավառի տիրակալի տիտղոսը։

11 «Անչելի»—Անլա վանքի եպիսկոպոսի տիտղոսը։

12 Ռոմանոս—բյուզանդական կայսր Ռոմանոս III (1028—1034 թթ.) որն ամուսնացած էր Վասիլ II Բուլղարասպանի զարմուհու՝ Զոյայի հետ։

13 Հավանաբար, այդ նույն ժամանակ կայսեր արքունիքում էր գտնվում նաև երկրորդ որդին՝ արքայազն Դեմետրեն։

14 Տաշիր-Զորագետի թագավոր (989—1048 թթ.) Կյուրիկեի (Գուրգենի) որդին ու գահի ժառանգորդը։

15 Նկատի ունի Տփղիսի էմիր Զաֆար իբն Ալիին (1032—1046 թթ.)։

16 Տփղիսի պաշարումը տևեց երկու տարի (1037/38—1039/40 թթ.)։

17 Տաշիր-Զորագետի թագավոր Դավթի ու Զորակրծելի՝ Կախեթի վերջին քորեպիսկոպոս Դավթի դստեր որդին՝ Դագիկը (1037/38—1058 թթ.) գահակալեց իր հորեղբորից՝ Կյուրիկե III-ից հետո, քանի որ վերջինս անժառանգ մահացավ։

18 Հունա-հռոմեական կշռի, ծավալի չափի միավոր, հավասար է 300—500 գր։ Օրինակ՝ XIII դ. այն հավասար էր 408 գրամի։

19 Արծաթե դրամ՝ 3,06 գր քաշով, ինչպես նաև կշռի չափ։

20 Գանձակի էմիր Ալի-Լաշքար II-ը (1034—1049 թթ.) ոչ թե Փադլուն իբն Մուհամմեդի (958—1031 թթ.) որդին էր, այլ թոռը։

21 Բագրատ IV-ի գործելակերպի վրա այդչափ անակնկալ ազդած պատճառներից մեկն այն լուրն էր, որ Վրաստանի սահմաններին էր մոտեցել Տփղիսի էմիրին օգնության եկած թուրք-սելջուկների զորքը։ Բագրատ IV-ի նման քայլը համարվում է միանգամայն մտածված իրավիճակի պահանջին համապատասխանող։

22 Ինչպես ասված է վերը (տե՛ս ծան. № 17) 1037/38 թթ. Կախեթ-Հերքի գահին բարձրացավ Կյուրիկյան Դագիկը։ Սակայն նրա գահակալությանը թշնամաբար վերաբերվեցին Կախեթի ավագանու որոշ ներկայացուցիչներ, որոնք առաջ էին քաշում Կյուրիկե III-ի մյուս քրոջ ամուսնու՝ Մարելիսի բերդի տիրոջ՝ Աշոտ Մարիլելու թեկնածությունը, որը, անշուշտ, դժգոհ էր Դագիկի գահակալությունից։ Քաղաքական ուժերի նոր տեղաբաշխումը խախտում էր Բագրատ IV-ի ծրագրերը նրա արևելյան դրացիների նկատմամբ։ Ուստի և ստեղծված իրավիճակի բերմամբ Աշոտ Մարիլելին դարձավ Բագրատ IV-ի դաշնակիցը։

23 Նկատի ունի Բագրատունյաց Հայաստանի քաղաքական գործիչներից մեկին՝ Սարգիս Հայկազնին։

24 Մարիամը Անիի կառավարիչ նշանակեց իր վասալներից Աբուսերին։

25 Իր որդու կողմից Տաշիր-Զորագետի թագավոր Դավիթ Կյուրիկյանի հանդես գալը բացատրվում է այն իրողությամբ, որ նրանք երկյուղ էին կրում Բագրատ IV-ի հետագա նվաճումներից, որն ամրապնդվել էր Տփղիսում և ընդհուպ մոտեցել նրանց սահմաններին։ Ի դեմս Լիպարիտի, որին սատարում էր Բյուզանդիան, Դավիթը տեսնում էր հզոր ու խոշոր մի ավատատերի, որն ըստ ամենայնի դիմադրում էր Բագրատ IV-ի կենտրոնացնող քաղաքականությանը։

26 Ռկինիսչվարի էր կոչվում Զեկարի լեռնանցքը, այժմյան Աբասթումանից հյուսիս։

27 Սուլթան-Թոզրուլ-Բեկի (1038—1063 թթ.) խորթ եղբայրը, սելջուկ զորավար։

28 Նկատի ունի սուլթան Ալփ-Արսլանին (1063—1072 թթ.)։

29 Թուրք սելջուկների առաջին ներխուժումը Վրաստան տեղի ունեցավ 1064—1065 թթ., իսկ Երկրորդը՝ 1067—1068 թթ.։

30 Նկատի ունի Տաշիր-Զորագետի թագավոր Կյուրիկե II-ին, որի եղբայրն ու գահակիցն էր Սմբատը։ Բերված վկայությունից երևում է, որ Բագրատ IV-ի երկրորդ քույրը ոչ թե Կյուրիկե II-ի, այլ նրա եղբոր՝ Սմբատի կինն էր, և սուլթանը խնդրում էր ոչ թե Կյուրիկե II-ի, այլ Սմբատի դստեր ձեռքը։ Մատթեոս Ուռհայեցու վկայության համաձայն Բագրատ IV-ի զարմուհին Կյուրիկե II-ի դուստրն էր (Մ ա տ թ է ո ս Ո ւ ռ հ ա յ ե ց ի, Ժամանակագրություն, Վաղարշապատ, 1898, էջ 145)։ Բագրատ IV-ը անհրաժեշտ էր համարում սուլթանի հետ իր զարմուհու ամուսնության կապակցությամբ Կյուրիկե II-ի համաձայնությունը ստանալ այն պատճառով, որ վերջինս Տաշիր-Զորագետի թագավորության պաշտոնական ներկայացուցիչն էր։ Վրաց վարկածի համաձայն Բագրատ IV-ի խնդրանքը մերժվեց։ Իսկ ըստ Մ. Ուռհայեցու, սուլթանը հայոց թագավորի դստեր ձեռքը ոչ թե Բագրատ IV-ից, այլ Կյուրիկե II-ից խնդրեց, որը երկիրը հետագա ավերածություններից զերծ պահելու միտումով տվեց իր համաձայնությունը։

31 Բագրատ IV-ը սուլթանի խնդրանքը օգտագործեց նաև Տաշիր-Զորագետի արքա Կյուրիկե II-ի հետ հաշվեհարդար տեսնելու և նրա երկրորդ մայրաքաղաքը խլելու համար։ Դրանից հետո հայ Կյուրիկյանների թագավորությունը զգալիորեն թուլացավ։ Դա տեղի ունեցավ նաև այն պատճառով, որ Կախեթ-Հերքի թագավորությունը, որտեղ իշխում էր Գագիկի որդին և թագաժառանգը՝ Աղսարթան I-ը (1058—1084 թթ.), անկում էր ապրում։

32 Նկատի ունի թուրք-սելջուկների 1068 թ. ներխուժումը։

33 Կախեթ-Հերքի թագավոր Աղսարթան I (1058—1084 թթ.)։

34 Այսպես էր կոչվում Մցխեթայի դիմաց՝ Արագվիի ձախ ափին բարձրացող Ջվարի վանքը։ «Ջաճվթա» բառացի նշանակում է «շղթաների վայր»։ Այս անվանումը մնացել է նախաքրիստոնեական ժամանակներից, երբ մարդ զոհաբերելու սովորություն գոյություն ուներ։ Զոհաբերվողը կապվում էր սրբազան շղթայով։

35 Նկատի ունի ափխազա-վրաց թագավոր Գեորգի II-ին (1072—1089 թթ.)։

36 Սուլթան Մելիքշահ (1072—1092 թթ.)։